ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԿԻՍՅԱՆ ԴԱՎԻԴ ԱՐԱՄԱՅԻՍԻ

ՌԴ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ԳԴՀ-Ի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴՐԱ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈՒԼՈՒՄ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ -2018

Ատենախոսության թեման հաստատվել է **Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,

պրոֆեսոր **Գ. Հ. Պետրոսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քաղ. գիտ. դոկտոր **Խ. Ս. Գալստյան**

քաղ. գիտ. թեկնածու **Հ. Յ. Թորոսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Հայ-ռուսական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2018 թ. մարտի 15-ին, ժամը 13:00-ին, ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Քաղաքագիտություն» 056 մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ, Երևան – 0037, Կ. Ուլնեցու փողոց 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. փետրվարի 14-ին:

056 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
հոգեբանական գիտությունների թեկնածու,
դոցենտ՝ Հ.Դ. Ասատրյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Գերմանիայիև Ռուսաստանի՝ որպես Եվրոպայի տնտեսապես խոշորագույն և ռազմականապես հզորագույն երկրների միջև փոխհարաբերությունները մեծապես ազդում են ինչպես տարածաշրջանային, այնպես էլ գլոբալ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական զարգացումների ընթացքի վրա:

Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է ժամանակակից ճգնաժամային/հետճգնաժամային շրջանում, երբ ԳԴՀ-ՌԴ, իսկ ավելի լայն ԵՄ-ՌԴ և Արևմուտք-ՌԴ հարաբերությունները մուտք են գործել հետագա հնարավոր զարգացման սցենարների բիֆուրկացիայի (երկճյուղվածության) փուլ: Թեմայի արդիականությունը մասնավորապես պայմանավորված է հետևյալ գործոններով:

Առաջին հերթին հարկ է նշել, որ շարունակվում է հետսառըպատերազմյան աշխարհակարգի փոխակերպումը: Այն արտահայտվում է միջազգային դերակատարների միջև հզորության բաշխման մասնաբաժինների դինամիկ փոխատեղությամբ և հզորության նոր կենտրոնների առաջացման ու դրանց միջև որակապես նոր հարաբերությունների ձևավորման տեսքով: Միջազգային հարաբերությունների միաբևեռ համակարգից բազմաբևեռ և/կամ բազմակենտրոն համակարգին անցումը չի կարող այս կամ այն կերպ իր հետքը չթողնել ԳԴՀ-ի և ՌԴ-ի փոխհարաբերությունների վրա: Միևնույն ժամանակ Գերմանիայի և Ռուսաստանի փոխհարաբերությունները իրենց հերթին մեծապես պայմանավորում են նման անցման ձևաչափն ու բովանդակությունը:

Այս համատեքստում չի կարելի չնշել Ռուսաստանի Դաշնության ՀՆԱ-ի տասնապատիկ աճը, ակտիվացված արտաքին քաղաքականությունն ու նոր դիրքավորումը միջազգային հարաբերությունների տարածաշրջանային և գլոբալ համակարգերում: Մյուս կողմից կարևորվում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության դիրքորոշումների դինամիկ փոփոխությունները ի պատասխան վերոնշյալ գործընթացների, ինչպես նաև սեփական արտաքին քաղաքական նախաձեռնությունները:

Այս բոլոր գործընթացները տեղի են ունենում Գերմանիայի՝ որպես Եվրամիության՝ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական հարցերով առաջնորդի դերի արմատավորման հենքի վրա:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Սույն հետազոտության օբյեկտն է Ռուսաստանի Դաշնության նկատմամբ Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին քաղաքականությունը: Ուսումնասիրության առարկան է Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության փոխակերպման և դրա միտումների դինամիկայի վրա ազդող գործոնների համալիրը:

Հիմնախնդրի գիտական ուսումնասիրվածության աստիճանը: Հետազոտության իրականացման ընթացքում օգտվել ենք թե՛ գերմանացի ու ռուս, և թե՛ երրորդ երկրների հեղինակների աշխատություններից: Գերմանացի հեղինակների գործերից հատկապես արժեքավոր են Հարնիշի[1], Մայսթերի[2], Բուհբեի[3] և Քոլշենի[4] աշխատանքները: Քոլշենը քննարկում է միջազգային հարաբերությունների տեսությունների կիրառելիությունը Գերմանիայի արտաքին քաղաքականության վերլուծության գործում, վերլուծում դրա մշակման վրա ազդող դերակատարների ազդեցությունը, ներկայացնում ԳԴՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները: Հարնիշի նշյալ աշխատությունը առաջիններից է, որը փորձում էԳերմանիայի արտաքին քաղաքականությունը վերլուծել հաջորդայնության և փոփոխության կոնցեպտների կիրառությամբ: Մայսթերը, լինելով «ուղեղային կենտրոնների» ոլորտի ներկայացուցիչ, հարցին անդրադառնում է կիրառական տեսանկյունից՝ կատարելով պրակտիկ քաղաքական վերլուծություն և ներկայացնելով առաջարկություններ:

Ռուս հեղինակների աշխատություններից կարելի է առանձնացնել Բելովի[5] (խմբ.), Պավլովի[6], Ուտկինի[7], Սինդեեվի[8], Ստրելեցի[9], Դեվյատկովի[10] գործերը:

Հարկ ենք համարում հատկապես առանձնացնել Ստրելեցի հոդվածը, որտեղ առաջ է քաշվում Մերկելի երկրորդ կաբինետի պաշտոնավարման

---

[1]Տե՛ uHarnisch S. Change and Continuity in Post-Unificationa German Foreign Policy // German Politics .-2001.-Vol.10.-No1.- P.35-60.

[2]Տե՛ uMeister S. 2014. Reframing Germany's Russia Policy – an Opportunity for the EU // European Council on Foreign Relations (Policy Brief) (ecfr.eu).- 24.04.2014.-12p.

[3]Տե՛ uBuhbe M. 2007. Grudnzuge einer deutschen Russland-Strategie / Kompass 2020.–Berlin: Friedrich Ebert Stiftung, 2007.-20p.

[4]Տե՛ uColschen, L.Deutsche Aussenpolitik.-Munchen: Wilhelm FinkGmBH & Co, 2010.-461p.

[5]Տե՛ u Под ред. Белова В . Германия: вызовы XXI века.- Москва: Весь мир, 2009.- 792с.
Белов В. ФРГ: восточный вектор внешней политики // Современная Европа.-2014.-N4.-С.97-102.
Белов В. Российско-германское сотрудничество – хорошее состояние нафоне плохой атмосферы. Германия. 2013 / Доклады Института Европы. N304.– Москва: Ин-т Европы РАН, 2014.- С. 107–124.
Белов В. Непростой год для российско-германских отношений Германия 2015. Ч.II / Доклады Института Европы. N328-– Москва: Ин-т Европы РАН, 2016.-94с.

[6]Տե՛ u Павлов Н. Внешняя политика ФРГ в постбиполярном мире.-Москва: Наука, 2005.-414с.
Павлов Н. Москва-Берлин-Брюсель: от трилатерализма к билатерализму? //Современная Европа.-2014.-N4(60)-С.106-110.
Павлов Н. Внешняя политика «большой коалиции» 2005–2009 гг. www.mgimo.ru/files/210929/Pavlov_Merkel_2005-2009.doc (հասանելիէառ 16.06. 2016).

[7]Տե՛ u Уткин С. Россия и Европейский Союз в меняющейся архитектуре безопасности: перспективы взаимодействия.- Москва: ИМЭМО РАН, 2010.-107с.

[8]Տե՛ u Синдеев А. «Восточная политика» ФРГ в контексте смены политических элит // Современная Европа.- 2014.-N4.(60).-С.102-106.

[9]Տե՛ u Стрелец М. Российский вектор внешней политики второго правительственного кабинета А. Меркель в ФРГ: некоторые аспекты истории // Вестник РГУ.- 2015.-N 1(46).-С.58-73.

[10]Տե՛ u Девятков А. Новые акценты немецкой «восточной политики»/ В кн.: Германия. 2013 (Доклады Института Европы N 304) под ред. Белова В..-Москва, 2014.- С.124-133.

տարիներին հաջորդայնության և փոփոխության միտումների հարցը: Կատարվում է փաստաթղթերի համեմատական վերլուծություն:

Ռուս-գերմանական համատեղ հեղինակային կոլեկտիվների աշխատություններից կարելի է առանձնացնել՝ Փլայնեսի և Շրյոդերի[11] (խմբ.), Հեթթի, Քրումի և Թրաուբ-Մերցի[12] (խմբ.), Դեվյատկովի և Մակարիչևի[13] (խմբ.) խմբագրած աշխատանքները:

Հեթթի, Քրումի և Թրաուբ-Մերցի խմբագրությամբ կոլեկտիվ մենագրությունում սցենարների կառուցման փորձագիտական մեթոդի կիրառությամբ կատարվում են ռուս-գերմանական հարաբերությունների ապագայի վերաբերյալ քաղաքական կանխատեսումներ:

Ռուս-գերմանական հարաբերությունների հետազոտությամբ զբաղվող երրորդ երկրների մասնագետների աշխատություններից մեծ կարևորությունենենեներկայացնում Սձաբոյի[14], Ադոմիթի[15], Օքսենսթիրնայի և Օլսոնի[16], Լիբրոնթի[17], Ֆորսբերգի[18], Թրեյսմանի[19] գործերը:

Սձաբոն դիտարկում է ռուս-գերմանական հարաբերությունները աշխարհատնտեսական մտածողության տեսանկյունից, քննարկում վերջինիս դերը Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության մշակման հարցում:

---

[11]Տե՛սPleines H., Schroeder H.-Die russische Aussenpolitik unter Putin.-Arbeitspapiere und Materialien/Forschungsstelle Osteuropa an der Universitaet Bremen,73.-Bremen:-2005.-160p.

[12]Տե՛ս ХеттФ., КруммР., Трауб-МерцР. ГерманияиРоссияв 2030 г.: сценариидлядвустороннихотношений.- Москва: Фондим. Фридриха Эберта, 2013 .- 34с.http://russiancouncil.ru/common/upload/Scenarios_DERU2030_Online%20RU.pdf (հասանելի է առ 02.12.2017թ.)

[13]Տե՛ս Россия и Германия в пространстве европейских коммуникаций / Под ред. Девяткова А. и Макарычева А.- Тюмень:Тюменский государственный университет, 2013.- 272с.

[14]Տե՛սSzabo S. Germany, Russia and the Rise of Geo-Economics .- London: Bloomsbury Academic, 2015.-200p.

Szabo S. Germany's Commercial Realism and the Russia Problem // Survival: Global Politics and Strategy.-2014.- Vol. 56.-No 5- P.117-128.

[15]Տե՛ս Adomeit H. German-Russian Relations: Balance Sheet since 2000 and Perspectives until 2025 / Comite d'etudes des relations franco-allemandes.- Bruxelles: Ifri, 2012.-39p.

Adomeit H. German-Russian Relations: Change of Paradigm versus "Business as Usual"/Study Committee for Franco-German Relations.-Bruxelles: Ifri, 2015.-36p. http://www.ifri.org/sites/default/files/atoms/files/ndc_120_adomeit_en_0.pdf (հասանելի է առ 02.12.2017թ.)

[16]Տե՛ս Oxenstierna S. and Olsson P. The Economic Sanctions against Russia: Impact and Prospects of Success/ FOI-R-4097-SE .- 2015.

[17]Տե՛ս Libront, K. The Economization of German Security Policy.The Case of German-Russian Relations. 17th Annual International Conference on Economics and Security 2013, SIPRI, Stockholm, 14-15 June 2013.

[18]Տե՛ս Forsberg T. From Ostpolitik to "Frostpolitik"? Merkel, Putin and German Foreign Policy towards Russia // International Affairs.-2016.-Vol.92.-Issue 1.-P.21-42.

[19]Տե՛ս Treisman D. Why Putin took Crimea: the Gambler in the Kremlin // Foreign Affairs.-2016.-Vol.95.-No 3.-P.47-57.

Ադոմիթը[20] կենտրոնանում է ՌԴ-ի նկատմամբ Գերմանիայի քաղաքական կուսակցությունների, ձեռներեց շրջանակների և հանրության դիրքորոշման փոփոխության վրա ուկրաինական ճգնաժամի ունեցած ազդեցության վերլուծության վրա: Օքսենսթիրնայի և Օլսոնի աշխատության մեջ քննարկվում են ՌԴ-ի դեմ կիրառված պատժամիջոցներին վերաբերող հարցերը, դրանց ազդեցությունը ավելացնող և նվազեցնող գործոնները: Լիբրոնթը փաստաթղթային վերլուծության միջոցով փորձում է վերհանել Գերմանիայի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները:

Այնուամենայնիվ, չնայած թեմայի վերաբերյալ զգալի գրականության առկայությանը, Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությանը վերաբերող մի շարք հիմնահարցեր մնում են չլուսաբանված:

Հենց այդ բացերի լրացմանն է ուղղված սույն ատենախոսական աշխատանքը:

Մասնավորապես՝ Ստրելեցը չի ներառում Մերկելի պաշտոնավարման բոլոր ժամկետները մինչև մեր օրերը: Սույն ատենախոսության շրջանակներում քննարկելով Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հաջորդայնության և փոփոխության միտումների հարցը՝ մենք վերլուծում ենք պատմական ամբողջական ժամանակաշրջանը:

Բացի դրանից, Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ հաջորդայնության և փոփոխության թեմային վերաբերող քննարկումները գրականության մեջ հիմնականում ընթանում են ոչ տեսական հարթության մեջ: Դրան հակառակ սույն ատենախոսությունում կատարվում է հիմնականում տեսական վերլուծություն:

Ո՛չ Ստրելեցը, և ո՛չ էլ Լիբրոնթը ուշադրության չեն առնում գերմանական կուսակցությունների քաղաքական ծրագրերի և կոալիցիոն կառավարությունների պայմանագրերի միջև կապը: Այս բացը ևս փորձել ենք լրացնել սույն աշխատանքի մեջ:

Ի տարբերություն Հեթթի, Քրումի և Թրաուբ-Մերցի խմբագրած վերոնշյալ աշխատության՝ սույն ատենախոսությունում իրականացվող կանխատեսումները արվել են խաղերի տեսության ֆորմալ մեթոդաբանության և միտումների քանակական ուսումնասիրության կիրառությամբ: Փորձել ենք օգտագործել նաև միջազգային հարաբերությունների կառուցվածքային ռեալիզմի տեսության որոշակի վարկածներ՝ ստանալով քննարկվող գործոնների ավելի լայն և էկլեկտիկ շրջանակ:

Աղբյուրագիտական հիմքը: Ատենախոսական աշխտանքի աղբյուրագիտական հիմք են ծառայել ՌԴ արտաքին գործերի

[20]Տե՛ uAdomeit H. German-Russian Relations: Change of Paradigm versus "Business as Usual"/Study Committee for Franco-German Relations.-Bruxelles: Ifri, 2015.-36p.

նախարարության էլեկտրոնային արխիվի[21]՝ 2005-2016թթ. ռուս-գերմանական հարաբերություններին վերաբերող 564 փաստաթղթերը, ԳԴՀ դաշնային կառավարության էլեկտրոնային արխիվի[22]՝ 2014թ. մարտ - 2016թ. ապրիլ ընկած ժամանակահատվածում Ա. Մերկելի ունեցած 193 ելույթների սղագրությունները: Օգտագործվել են նաև 2005թ., 2009թ. և 2013թ. կոալիցիոն կառավարությունների պայմանագրերը[23], ինչպես նաև գերմանական Բունդեսթագում 2005թ., 2009թ. և 2013թ. ընտրությունների արդյունքում ներկայացված հինգ խոշորագույն կուսակցությունների նշյալ տարիների նախընտրական ծրագրերը[24]: Աշխատանքի ընթացքում օգտվել ենք նաև գերմանական Բունդեսվերի՝ պաշտպանության նախարարության «սպիտակ գրքից[25]»:

---

[21]Տե՛ս Министерство иностранных дел Российской Федерации. Внешняя политика. Двусторонние отношения. Федеративная Республика Германия. http://www.mid.ru/ru/maps/de/?currentpage=main-country (հասանելի է առ 05.02.2017թ.)

[22]Տե՛ս Die Bundesregierung, Reden.https://www.bundesregierung.de/SiteGlobals/Forms/Webs/Breg/Suche/DE/Nachrichten/Redensuche2_formular.html?nn=391814&doctype.HASH=08c66c768cd5cb24e3d&path.HASH=e8e874fa01e22e8f2512&searchtype=news&path=%2Fbpainternet%2Fcontent%2Fde%2Frede*+%2Fbpainternet%2Fcontentarchiv%2Fde%2Farchiv17%2Frede*&doctype=speech&searchtype.HASH=ec0d611f8a232224ded3 (հասանելի է առ 10.10. 2016թ.)

[23]Տե՛ս CDU, CSU and SPD.Working together for Germany with Courage and Compassion: Coalition Agreement between the CDU, CSU and SPD, Berlin, 2005.-136p. http://bundesregierung.de/Content/EN/Artikel/2004_2007/2006/01/_Anlagen/coalition-agreement951220.pdf?__blob=publicationFile&v=1(հասանելի է առ 01.12. 2016թ.)
CDU, CSU and FDP. Growth, Education, Unity: Coalition Agreement between the CDU, CSU and FDP, Berlin, 2009.-100p. https://www.fdp.de/files/565/2009-203_en_Koalitionsvertrag_2009.pdf (հասանելի է առ 10.10. 2016թ.)
CDU, CSU und SPD. Deutschlands Zukunft gestalten: Koalitionsvertrag zwischen CDU, CSU und SPD, Berlin, 2013.-134s.
https://www.cdu.de/sites/default/files/media/dokumente/koalitionsvertrag.pdf
(հասանելիէառ10.10. 2016թ.)

[24]Տե՛սCDU,CSU. Wachstum, Arbeit, Sicherheit. Deutschlands Chancen Nutzen. Regierungsprogramm 2005-2009.-Verabschiedet in einer gemeinsamen Sitzung des Bundesvorstands der CDU und des Parteivorstans de CSU,Berlin: 11. Juli2005.-47s.
FDP. Arbeit hat Vorfahrt. Deutschlandprogramm 2005.- Berlin: FDP,Die Liberalen, 2005.-59s.
Eines fuer Alle. Das GrüneWahlprogramm 2005. –Berlin:Die Grünen, 2005.-124s.
FDP. Buergerprogramm 2013. Damit Deutschland stark bleibt.- Berlin: FDP, Die Liberalen, 2013.-94s.

[25]Տե՛սDie Bundesregierung . Weissbuch zur Sicherheitspolitik und zur Zukunft der Bundeswehr.-Bundesministerium der Verteidigung, Broschuere. Berlin: DieBundesregierung, 30.06. 2016.-73s.

ՌԴ պաշտոնական աղբյուրներից օգտագործվել են Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ու արտաքին քաղաքականության հայեցակարգեր, ինչպես նաև ՌԴ ռազմական դոկտրինը[26]:

Հետազոտության ժամանակագրական սահմանները: Ատենախոսական հետազոտությունը ժամանակագրական առումով ընդգրկում է 2005-2016թթ.: 2005թ.՝ Գ. Շրյոդերի պաշտոնավարությունից հետո, Ա.Մերկելի կողմից Գերմանիայի Դաշնային Հանրապետության կանցլերի պաշտոնը ստանձնելուց հետո որոշակի իմաստով նոր փուլ մտավ Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությունը: 2016թվականը կարևորվեց երկրի դաշնային կառավարության կողմից վերոնշյալ «սպիտակ գրքի» հրապարակմամբ, որտեղ առաջին անգամ պետական ծրագրային փաստաթղթի մակարդակով Ռուսաստանը դասվեց մարտահրավերների ցանկում: Քաղաքականության ժամանակագրական պարբերացման տեսանկյունից սա ևս խոսում է որակապես նոր փուլի արձանագրման մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՌԴ-ի նկատմամբ Գերմանիայի ժամանակակակից քաղաքականության ձևավորման և դրա միտումների վրա ազդող հիմնական գործոնների վերլուծությունն է:

Սույն նպատակի շրջանակներում առանձնացվել են հետևյալ խնդիրները.

1. վերհանել մակրո-, մեզո- և միկրո-մակարդակներում Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության ձևավորման վրա ազդող արտաքին և ներքին գործոնները,
2. կատարել ռուս-գերմանական հարաբերությունների պաշտոնական հրապարակային փաստաթղթերի ու ելույթների բովանդակային վերլուծություն,

---

[26]Տե՛ս Министерство иностранных дел РФ. Концепция национальной безопасности Российской Федерации.2000. http://www.mid.ru/ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/589768 (հասանելի է առ 29.10. 2017թ.).

Տե՛ս Министерство иностранных дел РФ. Указ Президента Российской Федерации от 7 мая 2012 года N 605 «О мерах по реализации внешнеполитического курса Российской Федерации». 2012. (հասանելիէ առ 29.10.2017.)

Տե՛ս Министерство иностранных дел РФ. Концепция внешней политики Российской Федерации. 2013. http://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/122186 (հասանելի է առ 29.10. 2017թ.)

Տե՛ս Министерстов иностранных дел. Военная доктрина Российской Федерации. 2015. http://www.mid.ru/ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/976907 (հասանելի է առ 29.10.2017թ.)

Տե՛ս Министерство иностранных дел РФ. Стратегия национальной безопасности Российской Федерации до 2020г. 2009. http://www.mid.ru/ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/294430 (հասանելի է առ 29.10.2017թ.)

Տե՛ս Министерство иностранных дел РФ. Концепция внешней политики Российской Федерации. 2016. http://www.mid.ru/ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/2542248 (հասանելի է առ 29.10.2017թ.)

3. հետազոտել Ա.Մերկելի պաշտոնավարման տարիներին Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության հիմնական միտումները, վերլուծել դրանց պատճառները,

4. որոշումների մշակման փուլային մոդելի միջոցով վերլուծել 2008թ. և 2014թ. ռազմաքաղաքական ճգնաժամերի ազդեցությունները Գերմանիայի պատասխան ռազմավարության ձևավորման վրա,

5. խաղերի տեսության և վիճակագրական մոդելավորման միջոցով ուսումնասիրել ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների քաղաքականությունը՝ կողմերի ռազմավարական հաշվարկները, հնարավոր զարգացման սցենարը և ազդեցությունը ուկրաինական հակամարտության ուժգնության վրա:

Հետազոտության տեսական և հայեցակարգային հիմքերը: Ատենախոսական աշխատանքն իրականացվել է հասարակագիտական պոզիտիվիզմի տրամաբանության մեջ:Հետազոտության տեսական հիմքն է միջազգային հարաբերությունների վերլուծության տեսական էկլեկտիցիզմի մոտեցումը: Հիմնախնդրի համալիր վերլուծությունը ապահովելու նպատակով աշխատանքում համադրվել են ինչպես ռեալիզմի ուղղության մետա- և միջին- (middle-range) մակարդակի տեսությունները՝ կառուցվածքային ռեալիզմն ու զսպման տեսությունը, այնպես էլ աշխարհատնտեսական մոտեցումներն ու արտաքին քաղաքականության վերլուծության պրիզմաներից Հերմանի տեսա-հայեցակարգային մոդելը:

Հետազոտության մեթոդաբանությունը: Վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով կիրառվել է հասարակական գիտություններում օգտագործվող քանակական, որակական և ֆորմալ մեթոդների լայն սպեկտր:

Պաշտոնական փաստաթղթերի և ելույթների վերլուծության ընթացքում օգտվել ենք ինչպես փաստաթղթերի ավանդական քաղաքագիտական վերլուծության, այնպես էլ քանակական կոնտենտ (բովանդակային) վերլուծության մեթոդներից: Կոնտենտ վերլուծության ընթացքում առանձնացված փոփոխականների կապը ռազմաքաղաքական և տնտեսական գործոնների հետ ստուգելու նպատակով կիրառվել են կոռելյացիոն և կրոսստաբուլյացիոն (խաչաձև աղյուսակների) վերլուծության մեթոդները:

Համեմատական դեպքային (քեյս) վերլուծության միջոցով ուսումնասիրվել են Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության հիմնական փոփոխությունները Ա. Մերկելի պաշտոնավարման տարիներին:

Խաղերի տեսության միջոցով իրականացվելէմոդելավորում՝ Գերմանիայի և Ռուսաստանի ռազմավարական փոխազդեցությունը ուկրաինական ճգնաժամի և պատժամիջոցների քաղաքականության համատեքստում ուսումնասիրելու նպատակով[27]:

---

[27]Հայ իրականության մեջ քաղաքագիտական խնդիրների վերլուծության ընթացքում ռազմավարական խաղերի և մոդելավորման մեթոդաբանության կիրառության կարևորության մասին տե՛ս Քոթանջյան, Հ.Հայաստանի պաշտպանության գիտակրթական համակարգի բարձրագույն բաղադրատարրը. Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փուլային կերպափոխումը

Կառուցված ֆորմալ մոդելից գեներացված՝ պատժամիջոցների և Արևելյան Ուկրաինայում հակամարտության ինտենսիվության միջև կապի վերաբերյալ վարկածները ստուգելու նպատակով իրականացվել է քանակական վերլուծություն: Առաջադրվել է բացասական բինոմիալ ռեգրեսիայի վիճակագրական մոդելը, որի միջոցով պարզվել է հակամարտության ինտենսիվության վրա ազդող մի շարք գործոնների ազդեցությունը:

Աշխատության մեջ կիրառվել են նաև այնպիսի ընդհանուր գիտական մեթոդներ և մոտեցումներ, ինչպիսիք են վերլուծությունը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, ընդհանրացումը, որոնց վրա հենվում են վերոնշյալ հատուկ գիտական մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության մեջ համակողմանիորեն վերլուծվել են Ռուսաստանի նկատմամբ Գերմանիայի քաղաքականության ձևավորմանը և դրա արդի միտումներին վերաբերող հիմնահարցերը: Վերլուծության արդյունքում առաջին անգամ.

- կազմվել է ուկրաինական ճգնաժամի և պատժամիջոցների քաղաքականության համատեքստում ԳԴՀ-ի և ՌԴ-ի ռազմավարական փոխազդեցության տեսական մոդելը, մաթեմատիկական մոդելավորման միջոցով կատարվել է հնարավոր զարգացման վերաբերյալ կանխատեսում,
- բացահայտվել են ռուս-գերմանական հարաբերությունների պաշտոնական փաստաթղթերի և ելույթների կոնտենտի հիմնական ուղղություններն ու թեմաները, ուրվագծվել է դրանց՝ վերջին տարիների դինամիկան, հաստատվել է այդ դինամիկայի կապը ռազմաքաղաքական և տնտեսական գործոնների հետ,
- վեր են հանվել Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության հաջորդայնության և փոխակերպման հիմնական միտումները, առաջադրվել է Ա. Մերկելի օրոք ՌԴ-ի նկատմամբ Գերմանիայի քաղաքականության շրջափուլերի պարբերացումը, առանձնացվել են յուրաքանչյուր փուլում արտաքին քաղաքական փոփոխությունների գործոններն ու դերակատարները,
- տրվել է 2008թ. Վրաստանում և 2014թ. Ուկրաինայում ռազմաքաղաքական ճգնաժամերի՝ ԳԴՀ-ի ռուսաստանյան քաղաքականության վրա ունեցած տարբեր ազդեցությունների համակողմանի բացատրությունը,
- դուրս է բերվել Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների առավել ամբողջական համալիր, պարզաբանվել է դրանց ֆունկցիոնալ դերակատարությունը ու փոխազդեցությունների բնույթը,
- բացահայտվել են Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությանը վերաբերող ներքին ծրագրային փաստաթղթերում քաղաքական-դիվանագիտական բառապաշարի ընտրության տարբերությունները,

---

Պաշտպանական ազգային համալսարանի // Հայկական բանակ.- 2010թ.-N1(63).- էջ 9-36:

պարզվել է դրանց վրա կոալիցիոն կառավարությունների կազմի փոփոխությունների ազդեցությունը,
- Արևելյան Ուկրաինայում հակամարտության ինտենսիվության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ռեգրեսիոն վերլուծության հիման վրա գնահատվել են պատժամիջոցների քաղաքականության դերը ուկրաինական ճգնաժամի էսկալացիայի համատեքստում:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Ատենախոսության տեսական արժեքն այն է, որ համալրվել է Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության մշակման վրա ազդող ներքին և արտաքին գործոնների հասկացութային գործիքակազմը:

Հայեցակարգային (կոնցեպտուալ) պրիզմաների կիրառությամբ բացահայտվել է ռազմաքաղաքական ճգնաժամերի ընթացքում Գերմանիայի պատասխան ռազմավարության ձևավորման և բարդ բազմագործոնային փոխազդեցության արդյունքում այլընտրանքային քաղաքական գծերի ընտրության մեխանիզմը:

Տեսական ընդհանրացումներ են կատարվել Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության փուլային անցումների, դրանց դրդապատճառների, որակական առանձնահատկությունների և հետևանքների վերաբերյալ:

Կիրառական նշանակության տեսանկյունից աշխատանքն արժևորվում է նրանով,որ հետազոտության արդյունքները և առաջին հերթին ռուս-գերմանական հարաբերությունների՝ քանակական ճշգրտությամբ չափված զարգացման միտումներն ու դրանց դինամիկան, մոդելավորված կանխատեսումները կարող են օգտագործվել Ռուսաստանի և/կամ Գերմանիայի նկատմամբ արտաքին քաղաքականության մշակման և իրականացման ընթացքում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավարության և համապատասխան գերատեսչությունների կողմից: Բացի պետական/քաղաքական գործիչներից, հետազոտության արդյունքները կարող են կիրառական նշանակություն ունենալ «ուղեղային կենտրոնների» վերլուծաբանների ու փորձագետների համար, ովքեր կարող են դրանք օգտագործել ընթացիկ և իրադարձային վերլուծություններում:

Աշխատանքում քննարկված հիմնախնդիրների լուսաբանումը և ստացված արդյունքները կարող են օգտագործվել նաև բուհական հատուկ դասընթացների դասավանդման, գիտահետազոտական և ուսումնամանկավարժական ձեռնարկների կազմման ժամանակ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

• Ռուս-գերմանական հարաբերություններում «ռազմավարական գործընկերության» դիսկուրսի ուժգնությունը (ինտենսիվությունը), որը կարող է հարաբերությունների որակական մակարդակիցուցանիշ ծառայել, կապված է երկու երկրներում վարչակարգերի փոփոխության հետ:

• Համագործակցությանը և հակամարտությանը վերաբերող որոշ թեմաների կիրառման հաճախականությունը կապված է առանձնացված տնտեսական և ռազմաքաղաքական գործոնների հետ՝ Արևելյան Ուկրաինայում ռազմական

գործողությունների ուժգնության, նավթի գնի, ՌԴ տնտեսական ցուցանիշների:

• Ա. Մերկելի պաշտոնավարման տարիներին Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությունը ընթացել է 4 որակապես տարբեր փուլերով՝ 2005-2008թթ., 2008-2012թթ., 2012-2014թթ., 2014-2016թթ.: Ընդ որում, դրան բնորոշ են եղել ներքին հաջորդայնությունը. խոշորագույն փոփոխությունների պատճառները եղել են արտաքին:

• 2008թ. և 2014թ. ռազմաքաղաքական ճգնաժամերի համատեքստային և էութենական տարբերություններն արտահայտվել են Բեռլինում արտաքին քաղաքական որոշումների մշակման գործընթացի 7 փուլերում, ինչի արդյունքում հանգեցրել են տարբեր պատասխան քաղաքականության Գերմանիայի կողմից:

• Կոալիցիոն կառավարությունների կազմի փոփոխությունն ազդում է Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությանը վերաբերող ներքին ծրագրային փաստաթղթերում քաղաքական-դիվանագիտական բառապաշարի ընտրության տարբերությունների վրա: Միևնույն ժամանակ, դա բերում է Հերմանի մատնանշած արտաքին քաղաքականության՝ նվազագույն, առաջին մակարդակի փոփոխությունների, մինչդեռ խոշոր փոփոխությունները տեղի են ունենում հիմնականում արտաքին գործոնների ազդեցության տակ:

Ատենախոսության փորձաքննությունը:Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի 2017թ. նոյեմբերի 23-ի ընդլայնված նիստում, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են գրախոսվող պարբերական գիտական հրատարակություններում հրապարակված հեղինակի գիտական հոդվածներում:

Ատենախոսական աշխատանքի հիմնական արդյունքները բանավոր զեկուցումներով ներկայացվել և քննարկվել են Միջին Արևմուտքի քաղաքագիտական ասոցիացիայի 75-րդ ամենամյա գիտաժողովում (75th Annual Conference of Midwest Political Science Association, Chicago 2017), Քաղաքական հետազոտությունների եվրոպական կոնսորցիումի 10-րդ ամենամյա գիտաժողովում (10th Annual Conference of European Consortium for Political Research, Charles University, Prague 2016), Գլոբալ հետազոտությունների վերաբերյալ 9-րդ միջազգային գիտաժողովում (9th International Conference on Global Studies, University of California in Los Angeles, Los Angeles, California, USA 2016), 7-րդ միջազգային գիտաժողովում (7th International Conference on Global Studies, Shanghai University, Shanghai, China 2014), Երևանի պետական համալսարան – Ռյազանի պետական համալսարան առցանց գիտաժողովում (Երևան-Ռյազան 2016թ.), «Դիվանագիտությունը՝ որպես միջազգային հակամարտությունների կարգավորման հիմնական մեթոդ» միջբուհական գիտաժողովում (Дипломатия как основной метод урегулирования международных

конфликтов, РАУ, Ереван 2014), ՀՀ գիտահետազոտական հաստատություններում տեղի ունեցած մի շարք գիտական սեմինարներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը շարադրված է 147 մեքենագիր էջի վրա և բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ինը ենթագլուխներով), եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից և երեք հավելվածներից: Աշխատանքում բերված են 9 նկարներ, 9 աղյուսակներ, 144 անուն գրականության ցանկ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, բերվում է գրականության տեսություն, որոշվում են հետազոտության օբյեկտը և առարկան, ատենախոսական աշխատանքի նպատակն ու խնդիրները: Ներկայացվում են հետազոտության գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը:

Ատենախոսության՝ «**ՌԴ-ի Նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության մշակման վրա ազդող ներքին և արտաքին գործոնները**»վերտառությամբ առաջին գլուխը, որը բաղկացած է երեք ենթագլուխներից, նվիրված է միկրո, մեզո և մակրո մակարդակներում Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության վրա ազդեցություն ունեցող գործոնների վերլուծությանը:

Առաջին՝ «**Գերմանիայում 2005-2016թթ. կառավարողկոալիցիաները և հիմնական քաղաքական կուսակցությունների դիրքորոշումները ՌԴ-ի նկատմամբ**»ենթագլխումվերլուծվում են դիտարկվող ժամանակաշրջանում Բունդեսթագում ներկայացված քաղաքական խոշորագույն կուսակցությունների դիրքորոշումները ՌԴ-ի նկատմամբ: Քննարկվում են դրանց նմանություններն ու տարբերությունները, փոփոխությունը ժամանակի ընթացքում և այդ փոփոխությունների կապը ռուս-գերմանական հարաբերություններին առնչվող խոշորագույն աշխարհաքաղաքական իրադարձությունների հետ: Փաստաթղթերի վերլուծության միջոցով վերհանվում է գերմանական կուսակցությունների նախընտրական ծրագրերում և կոալիցիոն պայմանագրերում արտահայտված՝ Ռուսաստանին վերաբերող դրույթների միջև կապը: Քննարկվում են դիտարկվող ժամանակաշրջանում երեք կառավարող կոալիցիաների ռուսաստանյան քաղաքականության հիմնական ուղղությունները, դրանց հիմնական կողմերի արտացոլումը կոալիցիոն պայմանագրերում:

Երկրորդ՝ «**ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության մշակման վրա ազդող արտախորհրդարանական և ոչ պետական դերակատարները**» ենթագլխում քննության են առնվում արտախորհրդարանական և ոչ պետական դերակատարների գործառույթներն ու նշանակությունը ԳԴՀ-ի ռուսաստանյան քաղաքականության մեջ: Քննարկվում են կանցլերի գրասենյակի, արտաքին գործերի գերատեսչության ֆունկցիոնալ դերակատարությունը դրա մշակման և համակարգման հարցում: Անդրադարձ է կատարվել արտգործնախարարների փոփոխության և Ռուսաստանի

նկատմամբ քաղաքականության հարցում նրանց դիրքորոշումներին: Ներքին գործոնների ու դերակատարների ազդեցության վերլուծությունն առավել համակողմանի դարձնելու նպատակով քննության է առնվել նաև տնտեսական և ձեռներեցական խոշոր կազմակերպությունների՝ Գերմանական տնտեսության արևելյան կոմիտեի, Գերմանական արդյունաբերական ֆեդերացիայի, Գերմանական արևելաեվրոպական տնտեսական միության դերակատարությունը:Ուշադրություն է դարձվել ուկրաինական ճգնաժամի ազդեցությանը Գերմանիայում առանցքային դերակատարների՝ Ռուսաստանի նկատմամբ զբաղեցրած դիրքորոշումների փոփոխության վրա:

Երրորդ՝ **«ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության վրա ազդող արտաքին և համակարգային գործոնները»** ենթագլխում գնահատվում են ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության վրա ազդող արտաքին անվտանգային, էներգետիկ, տնտեսական, ինչպես նաև համակարգային գործոնները: Քննարկվում է էներգետիկ անվտանգության, «Արևելյան գործընկերության», առևտրային հարաբերությունների, Ռուսաստանի ներքին քաղաքականության և ժողովրդարության խնդիրների տեղն ու դերը ռուս-գերմանական հարաբերություններում:

Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականությունը դիտարկվում է անդրատլանտյան կորդինատային համակարգի համատեքստում: Միջազգային հարաբերությունների համակարգի բևեռային կառուցվածքի մասին տեսությունների կիրառությամբ վերլուծվում է հետսառըպատերազմական շրջանում կլաստերային կոնֆիգուրացիայի դինամիկայի ազդեցությունը ռուս-գերմանական հարաբերություններում լարվածության աստիճանի վրա:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության հաջորդայնության ու փոխակերպման միտումները»** վերնագրված գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից: Այն նվիրված է ռուս-գերմանական հարաբերությունների հիմնական քաղաքական գործընթացների առանցքային միտումների ու վերջիններիս ցուցիչների վերլուծությանը:

Առաջին՝ **«Անգելա Մերկելի պաշտոնավարման տարիներին Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության հիմնական փուլերը»** ենթագլխում գործընթացային վերլուծության են ենթարկել Ա. Մերկելի պաշտոնավարման տարիներին Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության հիմնական միտումները: Ներկայացվել և ՌԴ-ի նկատմամբ ԳԴՀ-ի քաղաքականության վերլուծության ընթացքում կիրառվել է Զ. Հերմանի տեսա-հայեցակարգային պրիզման: Դրա արդյունքում կատարվել է Ա. Մերկելի օրոք Գերմանիայի ռուսաստանյան քաղաքականության պարբերացում, դուրս են բերվել քաղաքականության փոխակերպման մակարդակները, ներկայացվել են դրանց դրդապատճառները: Համեմատական վերլուծության միջոցով ներկայացվել է ռուս-վրացական և ուկրաինական ճգնաժամերի պայմաններում ԳԴՀ-ի արտաքին քաղաքականության ձևավորման յուրահատկությունները: Հաջորդաբար ներկայացվել են վերոնշյալ վերլուծական պրիզմայի շրջանակներում

առանձնացված՝ որոշումների կայացման գործընթացի սխեմատիկ շրջանակի յոթ փուլերից յուրաքանչյուրում ԳԴՀ-ի քաղաքականության վրա ազդող գործոնների տարբերությունները երկու ճգնաժամերի ընթացքում:

Երկրորդ՝ **«Արտաքին քաղաքականության հաջորդայնության և փոփոխության միտումների արտահայտումը պաշտոնական փաստաթղթերում և ելույթներում. բովանդակային վերլուծություն»** ենթագլխում կատարվել է ռուս-գերմանական հարաբերություններին վերաբերող ավելի քան յոթ հարյուր պաշտոնական փաստաթղթերի և ելույթների բովանդակային (կոնտենտ) վերլուծություն: Կոդավորման միջոցով վերհանվել են դրանցում շոշափված՝ ՌԴ-ին վերաբերող թեմաները:Որոշվել է վերջիններիսբացարձակ և հարաբերական հաճախականությունը: Կորելյացիոն և կրոստաբուլյացիոն վերլուծության միջոցով հաստատվել է դրանց կիրառման հաճախականության փոխկապակցվածությունը ռազմաքաղաքական ու տնտեսական գործոնների հետ:Քննության է առնվել ռուս-գերմանական հարաբերություններում կարևոր տեղ զբաղեցնող «ռազմավարական գործընկերություն» եզրույթի ու հայեցակետի կիրառության դինամիկան: Վերլուծությունն առավել ամբողջական դարձնելու նպատակով անդրադարձ է կատարվել Ռուսաստանի Դաշնության արտաքին քաղաքականության հիմնարար փաստաթղթերում Գերմանիայի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի ներկայացման խնդիրներին: Կատարվել է պաշտոնական կոնտենտի համալիր հետազոտություն:

Երրորդ՝ **«Գերմանիան և ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների քաղաքականությունը»** վերտառությամբ գլուխը բաղկացած է չորս ենթագլուխներից: Դրանում վերլուծվում են ուկրաինական ճգնաժամի ընթացքում ՌԴ-ի նկատմամբ ընդունված պատժամիջոցները, դրանց ընդունման դրդապատճառները, Գերմանիայի դերակատարությունն ու ռուս-գերմանական հարաբերությունների նոր փուլի հետագա զարգացման սցենարների մոդելավորումը:

Առաջին՝ **«Ռուսաստանի դեմ գերմանական պատժամիջոցների քաղաքականության վերլուծությունը ֆորմալ մոդելավորման միջոցով»** ենթագլխում խաղերի տեսության միջոցով վերլուծվել են Գերմանիայի՝Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներ կիրառելու որոշման վրա ազդող գործոնները: Ֆորմալ մեթոդների միջոցով ներկայացվել են Գերմանիայի և Ռուսաստանի պատկերացումները պատժամիջոցների կիրառման կամ չկիրառման և դրանց կիրառումից հետո ենթարկվելու ու չենթարկվելու դեպքերում հակառակ կողմի պատասխան քայլերի ու սեփական շահերի մասին: Հիմնվելով այդ պատկերացումների վրա՝ վերարտադրվել են կողմերի կատարած քաղաքական կանխատեսումները և վերլուծվել այդ կանխատեսումների համատեքստում նրանց որոշման վրա ազդող գործոնները:Տրվել է ԳԴՀ-ի և ՌԴ-ի կողմից ընտրված ռազմավարությունների բացատրությունը:Ուսումնասիրվել է «լարանային ծախսերի» դինամիկան, հանրային կարծիքը երկու երկրներում, դրա կապը արտաքին քաղաքական կուրսի հետ:

Երկրորդ՝ **«ՌԴ-ից էներգետիկ կախվածության գործոնն ու տնտեսական պատժամիջոցների քաղաքականությունը»** ենթագլխում գնահատվել է ՌԴ-ից էներգետիկ կախվածության դերը տնտեսական պատժամիջոցների քաղաքականության հարցում: Կրոստաբուլյացիա է իրականացվել Ռուսաստանի նկատմամբ ԵՄ քսանութ անդամների զբաղեցրած դիրքորոշման և էներգիայի ընդհանուր սպառման մեջ ՌԴ-ից ներկրվող գազի ծավալի փոփոխականների միջև: Գնահատվել և էմպիրիկ ստուգման է ենթարկվել աշխարհատնտեսական մոտեցման հեղինակների տեսակետը գազի ներկրման գործոնի՝ որպեսքաղաքական ճնշման լծակի արդյունավետության վերաբերյալ: Ցույց է տրվել Ռուսաստանի նկատմամբ քաղաքական բարենպաստ գիծը պայմանավորելու հարցում դրա ազդեցության սահմանափակ բնույթը:

Երրորդ՝ **«Պատժամիջոցները, «նորմանդական ձևաչափով» բանակցությունները և Ուկրաինայի արևելքում հակամարտության դինամիկան»** ենթագլխում վերլուծվել է Ռուսաստանի դեմ պատժամիջոցների քաղաքականության ազդեցությունը Ուկրաինայի արևելքում հակամարտության էսկալացիայի վրա: Քննվել է վերջինիս դինամիկան, բերվել է դրա վիճակագրական նկարագրությունը: Չափվել է ռազմաքաղաքական, տնտեսական, ներքին քաղաքականությանը վերաբերող գործոնների ազդեցությունը: Վիճակագրական մոդելի շրջանակներում ստուգվել են ֆորմալ մոդելավորման միջոցով գեներացված վարկածները՝ հակամարտության դինամիկայի վրա պատժամիջոցների ունեցած ազդեցության վերաբերյալ: Վերլուծվել են «նորմանդական ձևաչափով» բանակցությունների հիմնական փուլերն ու առանցքային հանդիպումները, կողմերի դիրքորոշումները և արձանագրված արդյունքները: Գնահատվել է բանակցային գործընթացի ու հակամարտության ուժգնության միջև կապը:

Չորրորդ՝ **«Ռուս-գերմանական հարաբերությունների հնարավոր զարգացումների մոդելավորումը ուկրաինական ճգնաժամի համատեքստում»** ենթագլխում, կիրառելով Նեշի հավասարակշռության, Պարետո-օպտիմալության, կրկնվող խաղի կոնցեպտները, անդրադարձ է կատարվել ուկրաինական ճգնաժամի համատեքստում ռուս-գերմանական հարաբերությունների հնարավոր զարգացումների մոդելավորման և կանխատեսման հիմնահարցերին:

«Եզրակացություն» մասում ներկայացվում են ատենախոսական հետազոտության արդյունքում դուրս բերված ներքոբերյալ հիմնական հետևությունները.

1. Ռուսաստանի նկատմամբ քաղաքական մոտեցումներում մինչ ուկրաինական ճգնաժամը զգալի տարակարծություն էր նկատվում մի կողմից ՔԴՄ/ՔՍՄ մի մասի ու «կանաչների» և մյուս կողմից սոցիալ-դեմոկրատների միջև: Ճգնաժամը առավել մոտեցրեց նրանց դիրքորոշումները:
2. Էներգետիկ կախվածության գործոնը որոշիչ դեր չի խաղում եվրոպական երկրների՝ Ռուսաստանի նկատմամբ դիրքորոշումը թելադրելու հարցում: Ուստի և Գերմանիայի՝ ՌԴ-ից էներգետիկ կախվածության բարձր

աստիճանը չդարձավ որոշիչ զսպող գործոն տնտեսական պատժամիջոցների կիրառման հարցում: Ռուսական էներգակիրներից ունեցած հարաբերական կախվածության դանդաղ, բայց հետևողական թուլացումը խոսում է այն մասին, որ երկարատև հեռանկարում Գերմանիան գործելու է առավել անկաշկանդ:

3. Երկու ֆորմալ մոդելների միջոցով արված կանխատեսման արդյունքում պարզվել է, որ թե՛ այն դեպքում, երբ Ռուսաստանի ղեկավարությունը կարծում է, որ պատժամիջոցները վերացվելու են ապագայում որոշակի մի ժամանակ, և թե՛ այն դեպքում, երբ նման վստահություն չկա, Ռուսաստանն ուկրաինական ճգնաժամի հարցում չի վերադառնալու ստատուս քվոյին:

4. Պատժամիջոցների կուրսի ընդունմանը Գերմանիայի ղեկավարության կողմից մեծապես նպաստեց երկրի հանրության հզոր աջակցությունն այդ քաղաքական գծին՝ չնայած Գերմանիային հասցվող տնտեսական վնասին: Գերմանական հասարակական կարծիքն արմատապես փոխվեց 2014թ. մարտ -հուլիս ժամանակահատվածում:

5. Խաղերի տեսության մեթոդի կիրառման արդյունքում եզրակացություն է արվել, որ պատժամիջոցներ կիրառելու որոշումն ընդունելիս Բեռլինի կառավարող շրջանակները չէին ակնկալում Ղրիմի վերադարձը Ռուսաստանի կողմից՝ ստատուս քվոյի վերականգնումը, առավել ևս այն դեպքում, որ սկզբնական պատժամիջոցները վերաբերում էին առանձին անհատների և ոչ Ռուսաստանի տնտեսության սեկտորներին:

6. Կատարված վիճակագրական վերլուծության արդյունքները փաստում են, որ 2014-2015թթ. Ուկրաինայի արևելքում հակամարտության ուժգնությունը նվազեցնող գործոնների շարքում եղել են նավթի գնի և ՌԴ ու Ուկրաինայի ՀՆԱ-ների աճի տեմպերի անկումը: Քանի որ պատժամիջոցները Համաշխարհային բանկի հաշվարկներով տարեկան նվազեցնում են ՌԴ ՀՆԱ 1%-1,5%-ով, դրանք ազդել են նաև հակամարտության ինտենսիվության վրա:

7. Կլաստերային և հզորության բաշխման տեսանկյունից նոր աշխարհակարգն անբարենպաստ է ռուս-գերմանական հարաբերությունների շուտափույթ կարգավորման համար:

8. Ռուս-գերմանական հարաբերությունների ինստիտուցիոնա-լիզացիայի մակարդակի անկումը բացասաբար կանդրադառնա դրանց հետագա ընթացքի վրա նաև երկարատև հեռանկարում, քանի որ ապաինստիտուցիոնալացումն ավելի է ընդլայնում արժեքային վիհը և վերացնում քաղաքական շփումների մի շարք ալիքներ:

9. Ռուս-գերմանական հարաբերություններում կարևոր տեղ զբաղեցնող «ռազմավարական գործընկերության» հայեցակարգը զգալի փոփոխություններ է ապրել Ա. Մերկելի իշխանության գալուց ի վեր: Պաշտոնական հարաբերություններում «ռազմավարական գործընկերության» նարատիվի ինտենսիվության տատանումները մեծապես կապված են եղել ՌԴ նախագահների փոփոխության և նրանց պաշտոնավարման ժամկետների,

«Գործընկերություն հանուն արդիականացման» ծրագրի և վերջին տարիների ուկրաինական ճգնաժամի հետ:

10. Ղրիմի միացումից հետո կանցլերի ելույթներում դոմինանտ են դառնում այնպիսի կրիտիկական թեմաներ, ինչպիսիք են «միջազգային իրավունքի սկզբունքների խախտումը» ՌԴ-ի կողմից, «Ղրիմի բռնակցումը» և «պատժամիջոցները»: Համագործակցության թեման այնուամենայնիվ պահպանվում է, սակայն ավելի ցածր ինտենսիվությամբ: Այլևս չի նշվում «ռազմավարական գործընկերության» մասին:

11. Ասոցիատիվ կապեր են հայտնաբերվել առանձին նարատիվների ինտենսիվության և այնպիսի ռազմաքաղաքական և տնտեսական փոփոխականների միջև, ինչպիսիք են «Բրենտ» նավթի գինը, ՌԴ ՀՆԱ-ի աճը և Ուկրաինայի արևելքում ընթացող հակամարտության ուժգնությունը:

12. Ռուսաստանի և Գերմանիայի լսարանային ծախսերի ֆունկցիաների դինամիկան վկայում է այն մասին, որ ատենախոսությունում առաջադրված ֆորմալ մոդելի Նեշի հավասարակշռությունը ժամանակի ընթացքում դառնում է ոչ օպտիմալ ըստ Պարետոյի, ինչը սահմանափակ համագործակցության հնարավորություն է ստեղծում:

Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հոդվածներում.

1. Саркисян Д. Сравнительный анализ стратегий Германии в ответ на военно-политические кризисы 2008г. и 2014г. // Вестник Ереванского университета: международные отношения, политология.-N3.-Ереван-2016.-С.45-56.

2. Саркисян Д. Российская политика Германии сквозь призму официальных документов и речей (2005-2016гг.)//21-ый ВЕК.- N4(41).-Ереван-2016.-С.83-95.

3. Սարկիսյան Դ. Ռուս-գերմանական հարաբերությունների հեռանկարները // 21-րդ ԴԱՐ.-N4(68).-Երևան-2016.-էջ 69-82:

4. Սարկիսյան Դ. Ռուս-գերմանական հարաբերություններն ուկրաինական ճգնաժամի և պատժամիջոցների քաղաքականության համատեքստում// Հանրային կառավարում.-N2.-Երևան-2016.-էջ 204-212:

5. Սարկիսյան Դ. Ռուսաստանի դեմ գերմանական պատժամիջոցների քաղաքականության մոդելավորումը խաղերի տեսության միջոցով // 21-րդ ԴԱՐ.-N3(67).-Երևան-2016.-էջ 28-41:

6. Սարկիսյան Դ. Ռուս-գերմանական հարաբերությունները ներկա փուլում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն.-N1.-Երևան-2016.-էջ 19-31:

7. Sarkisyan D. Diplomacy-Power Ratio in European-Russian Relations // Global Studies Journal.-Vol.8, Issue 3.- 2015.-P.45-54.

8. Sarkisyan D. EU-Russia Relations at the Crossroads // Сборник статей межвузовской конференции на тему: «Дипломатия как основной метод урегулирования международных конфликтов».-РАУ-Ереван-2014.-ISBN 978-9939-0-1038-0.-С. 31-39:

САРКИСЯН ДАВИД АРАМАИСОВИЧ

«ПОЛИТИКА ФРГ В ОТНОШЕНИИ РФ И ЕЕ ТРАНСФОРМАЦИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ»

Диссертация на соискание ученой степени кандидата политических наук по специальности 23.00.02 – «Политические институты и процессы, международные отношения».

Защита состоится 15 марта 2018г., в 13:00, на заседании специализированного совета ВАК РА 056 «Политология» при Национальном исследовательском университете обороны МО РА (ул. К. Улнеци 56/6, 0037, г.Ереван, Республика Армения).

Резюме

Диссертационная работа на тему «Политика ФРГ в отношении РФ и ее трансформации на современном этапе» посвящена исследованию ряда проблем, связанных с формированием современной российской политики Германии, изучению индикаторов ее трансформации, взаимосвязи с региональными и глобальными геополитическими и геоэкономическими процессами.

Целью диссертационного исследования является изучение трансформации российской политики Германии и выявление комплекса факторов, влияющих на ее тенденции.

Во **введении** обосновывается актуальность темы работы, приводится обзор литературы, ставятся цель и задачи исследования. Представляются научная новизна, положения, выносимые на защиту, теоретическая и практическая значимость работы.

Первая глава,**«Внутренние и внешние факторы, влияющие на политику ФРГ в отношении РФ»,** посвящена анализу факторов, оказывающих влияние на российскую политику Германии на микро-, мезо- и макро-уровнях. Освещаются позиции крупнейших немецких партий, представленных в Бундестаге, по отношению к РФ. С помощью политологического анализа документов выявлены связи между предвыборными программами партий и положениями касательно России, нашедшими место в коалиционных договорах. Исследованы функции и роль внепарламентских и негосударственных акторов в российской политике Германии. Дана оценка влиянию внешних безопасностных, энергетических, экономических и системных факторов. Политика ФРГ по отношению к России рассматривается в контексте трансатлантической координатной системы. С применением теорий о структуре и полюсах системы международных отношений анализируется влияние динамики кластерной конфигурации постбиполярного мира на степень напряженности в российско-немецких отношениях.

Во второй главе, **«Тенденции последовательности и изменений в политике ФРГ по отношении РФ»,** предложена периодизация российской политики Германии, выявлены уровни ее трансформации и их причины. Путем сравнительного анализа представлены особенности формирования ответной стратегии ФРГ в условиях российско-грузинского и украинского кризисов. В качестве индикаторов трансформации политики с помощью контент-анализа были изучены более чем 700 официальных документов и речей. Проведено кодирование тем, касающихся России, измерена их абсолютная и относительная частота употребления. Методом корреляционного и кросстабуляционного анализа были установлены связи между частотой употребления отдельных тем и рядом военно-политических и экономических факторов.

Третья глава, **«Германия и санкционная политика против России»,** посвящена анализу санкционной политики против РФ, причинам ее принятия, роли Германии и обсуждению сценариев дальнейшего развития новой фазы российско-немецких отношений. Проанализированы основные этапы и ключевые встречи, позиции сторон и полученные результаты в рамках переговорного процесса в «нормандском формате». Оценено влияние ряда факторов на динамику интенсивности конфликта на востоке Украины. При помощи статистического анализа были проверены гипотезы, генерированные в результате применения теории игр, касательно влияния данных факторов. Методом кросстабуляции оценена роль фактора энергетической зависимости от РФ в вопросе санкционной политики. Применением концепций равновесия Нэша, оптимальностипо Парето, повторяющейся игры смоделированы сценарии развитияроссийско-немецких отношений в контексте украинского кризиса.

Основные результаты исследования представлены в **заключении**.

Теоретическая значимость работы заключается в пополнении концептуального аппарата внутренних и внешних факторов, влияющих на российскую политику Германиии ее трансформации. В диссертационном исследовании даны теоретические обобщения о фазовых переходах политики ФРГ по отношению к РФ, их эндогенных и экзогенных причинах, качественных особенностях и результатах.

С точки зрения **практической значимости** результаты диссертационной работы и, в первую очередь, выявленные тенденции динамики российско-немецких отношений, измеренные с помощью количественного анализа, а также смоделированные прогнозы могут быть применены при разработке политики по отношению к России и/или Германии, в том числе политическим руководством и соответствующими ведомствами Республики Армения. Результаты и основные выводы работы также могут быть использованы аналитиками и экспертами, «мозговыми центрами» при ситуационном анализе тех или иных развитий российско-немецких отношений.

DAVID ARAMAYIS SARKISYAN

"FRG POLICY TOWARDS RF AND ITS TRANSFORMATIONS IN THE CONTEMPORARY PERIOD"

PhD Dissertation in Political Science: Specialization 23.00.02 - "Political Institutions and Processes, International Relations".

The public defense of the dissertation will take place on March 15, 2018, at 13:00 at the National Defense Research University MoD RA at HAC Specialization Chamber session (address: 56/6 K. Ulnetsi str., 0037, Yerevan, Republic of Armenia).

Abstract

The dissertation on the topic of "FRG Policy towards RF and its Transformations in the Contemporary Period" studies the issues related to the shaping of Germany's contemporary Russian policy. It studies the indicators of its transformation and its interplay with the regional and global geopolitical and geo-economic processes.

The main goal of the research is the study of the transformation of Germany's policy towards Russia and the set of factors that have an impact on its trends.

The **introduction** part of the dissertation identifies the relevance of the topic, covers the literature review, and sets the main goal and objectives of the research. The contribution to the literature, scientific novelty, key findings, and the theoretical and practical significance of the dissertation are also presented.

The first chapter, entitled **"Domestic and External Factors Influencing Germany's Policy towards Russia",**analyzes the factors that affect Germany's policy towards Russia at micro-, mid-, and macro- levels. The positions on Russia of the large German parties, represented in the Bundestag are studied. As the result of the document analysis, connections have been revealed between the election programs of the parties and the position points on Russia included in the coalition agreements. The functions and roles of the non-parliamentary and non-governmental actors in Germany's policy towards Russia have been studied. The impact assessment on the influence of the external security, energy, economic and systemic factors has been carried out. Germany's policy towards Russia has also been studied in the context of transatlantic coordinate system. Applying the international relations theories of systemic structure and polarity, we have analyzed the effect of post-bipolar cluster configuration dynamics on the level of tension in the Russian-German relations.

In the second chapter, **“The Trends of Change and Continuity in Germany’s Policy towards Russia”**, we have proposed the periodization of Germany’s policy towards Russia identifying the levels and the causes of its transformation. A comparative analysis has been carried out to identify the peculiarities of the German response strategy formation during the Georgian and Ukrainian crises. More than 700 official documents and speeches have been selected as indicators of policy transformation and have been studied with the application of content analysis. Russia-related themes have been coded and the absolute and relative frequencies of their usage have been determined. Correlational and cross-tabulation analyses have been carried out to establish the associative relationships between those frequencies and a number of military-political and economic variables.

The third chapter, entitled **“Germany and the Sanctions Policy against Russia”**, analyzes the sanctions policy against the Russian Federation, its causes, Germany’s role and scenarios of possible development of the new phase in the Russian-German relationship. The main stages and key meetings, as well as the positions of the parties to the conflict and results of the negotiations in the framework of the “Normandy format” have been studied. The effects of a number of factors on the intensity dynamics of the conflict in the Eastern Ukraine have been established. The hypotheses on the abovementioned effects that had been generated by the game theoretic model have been tested statistically. The role of the factor of energy dependence from Russia in the context of sanctions policy has been assessed through the application of cross-tabulation analysis. Applying the concepts of Nash equilibrium, Pareto-optimality, repeated games, scenarios of future developments in the Russian-German relations have been modeled.

The key findings of the study are presented in the **conclusion**.

The **theoretical significance** of the dissertation is constituted by the replenishment of the conceptual framework of endogenous and exogenous factors affecting Germany’s policy towards Russia and its transformations. Theoretical generalizations have been made on the phase transitions of Germany’s Russian policy, their internal and external causes, qualitative features and results.

In terms of the **practical significance** of the conducted study, the results of the dissertation, and namely the verified trends of the dynamics in the Russian-German relations, measured with quantitative precision, as well as the modeled forecasts may be used (among others, by the political leadership and the relevant bodies of the Republic of Armenia) in the formation of policy towards Russia and/or Germany. They may also be utilized by the analysts, experts and think tanks in the situational analysis of several processes in the Russian-German relations.